

Էդվարդ Իսաբեկյան

-100-

Հայաստանի ժողովրդական նկարիչ Էդվարդ Իսաբեկյանը կոմպոզիցիոն-թեմատիկ նկարի ճանաչված վարպետներից է:

Իսաբեկյանը ծնվել է 1914թ. Իգդիրում, սովորել է Վրաստանի Գեղարվեստի ակադեմիայում: Նրա ստեղծագործությունը հարուստ է բնանկարի, դիմանկարի և կոմպոզիցիոն թեմաներով:

Հայ ժողովրդի ազատության և անկախության վաղեմի ձգտման հրաշալի օրինակ է նրա աչքի ընկնող կոմպոզիցիաներից «Պատանի Դավիթը», «Պատասխան Հազկերտին», որով նկարիչը շեշտում է, որ հայ ժողովրդի ոգին, նրա ազգային ինքնտիպությունը չի կարելի ոչնչացնել: Էդվարդ Իսաբեկյանը մեծ վաստակ ունի նաև հասարակական և մանկավարժական գործունեության մեջ: